# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար սեդան թափքով մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«09» հունիսի 2023թ.
ժամը՝ 17:15

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Աստրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 15 րդ օրվա (08.06.2023թ.)՝ ժամը 15:00-ն:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնման գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4 ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1 ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և գնման հայտով սահմանված է սեդան թափքով մեքենաների ձեռքբերման համար կանխատեսվող գնման ընդհանուր գինը.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված՝ ապրանքի ձեռքբերման համար կանխատեսվող գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Սեղան թափքով մեքենաներ | 85 000 000 |

**3. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**4. Տեղեկություն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահին՝ 2023թ.-ի հունիսի 08-ին՝ ժամը 15:00-ին, Համակարգից ստացված տեղեկատվության համաձայն ԴԴ ԷԱՃԱՊՁԲ-23/21 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը չի կայացել մասնակից չլինելու պատճառով:

**Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

Նորայր Աղամալյան

Տիգրան Չելնալյան

Անդրանիկ Արզարյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան